ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ Վ. ՏՈՏՈՄԵԱՆՑ

Շնորհակալութեամբ ստացանք յարգելի հեղինակից իր երկասիրած գիրքը « ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ » *խորագրով։ Յառաջաբանը գրած է յայտնի Հայասէր Լ. Լուցցատտին։*

Սա կը պատմէ իր առաջին ծանօթութեան մասին յարգելի հեղինակին հետ, որ տեղի ունեցեր է Միլանու մէջ, բանուորական խուռն բազմութեան մը դասախօսած ժամանակ։ Այդ բարեկամութիւնն տարիներու հետ դարձել է մտերմական. և միշտ միտքը դրած է եղել որ Պր. Տոտոմեանց ռուս է։

Կը գովէ անոր լեզուագիտութիւնն, և բազմակողմանի զարգացումն և խոր հմտութիւնն իր մասնաճիւղի մէջ։ Կ'ասէ որ նա եղած է առաջինը Ռուսաստանի մէջ տնտեսական բանւորական համաշխատակցական ընկերութիւններու հաստատողն և պաշտպանը. և ունէր իր աթոռն Մոսկուայի կայսերական Համալսարանի մէջ։

Այս անգամ Հռոմում հանդիպած ժամանակ միայն իմացեր է նորա Հայ լինելը. և պատճառ կ'առնու արևելքի երկու յառաջադէմ ազգերու, Եբրայեցւոց և Հայոց պատմութիւնն համեմատութեան դնելու, որոնք քաղաքակրթութեան դատի համար, ենթարկուեր են նոյնանման հալածանքներու և տանջանքներու, և յոյս կը յայտնէ թէ՛ իրենց և թէ՛ Հայաստանի վերածնութեան համար՝ սրտագին ուղերձով մը։

Գրքի բովանդակութեան մասին հիացմամբ կը խօսի։ Հայաստանի տնտեսական վիճակի վրայ գրած տեղեկութիւններէն դատելով, նա կ'ասէ, ոչ թէ բեռն պիտի ըլլայ Եւրոպայի, այլ փայլուն զարդ մը, շահուէտ՝ կարծուածէն աւելի, որուն սահմանուած է վերահաստատել տնտեսական օղակը Արևելքի և Արևմուտքի միջև, մանաւանդ Իտալիոյ հետ, ինչպէս երբեմն փայլեցաւ Գենովայի և Վենետկոյ Հասարակապետութեանց դարաշրջանին։

Մեր անկեղծ ուրախակցութիւնները յարգելի Ուսուցչապետին, գրքի ճոխ բովանդակութեան և յստակ ոճի համար, որով գրածներու արժէքն աւելնալով, իր իսկ վարկն և պատիւն կը բարձրանայ թէ մեր և թէ օտարազգի գրական և գիտական շրջաններում։

Գիրքը գրուած է իտալերէն լեզուով։

Գրքի բովանդակութիւնն է

1. *Կարևորութիւն տնտեսական Հայաստանի.* — 2. *Փոքր Ասիոյ Հայաստանը.* — 3. *Հայաստանը Կովկասում.* — 4. *Բնական հարստութիւնները.* — 5. *Երկրագործութիւն և հողատիրութիւն.* — 6. *Ճարտարարուեստագործութիւնք.* — 7. *Հաղորդակցութեան ուղիներ.* — 8 *Հարկատուութեան դրութիւնը.* — 9. *Յարաբերութիւնք Հայաստանի և Իտալիոյ միջև.* *Ժ. Հայաստանի տնտեսական հեռապատկերները։*

Տպ. Հռոմ 1919. *գինն է իտ. լիրա* 2։

.ՄԵՂՐԻ ՇԻՐԱԿԱՑ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

1918 *տարւոյ Բազմավէպի ամբողջական հատորի հրատարակութեան համար՝ կը խնդրենք մեր ազնիւ Ազգայիններէն՝ որ հաճին մեզի սատարել, ուղարկելով.*

Պատերազմի ընթացքին մէջ տեղի ունեցած հայկական աղետներու, դիւցազնութիւններու վերաբերեալ ստուգապատում տեղեկութիւններ, և Հայկական Անկախութեան գործին նպաստող և պատերազմի մէջ՝ կառավարող, կռւող և ընկնող նահատակներու վարուց, գործոց և տեղեաց վրայ յօդուածներ, տեղեկութիւններ ու լուսանկարներ։ ՏԵՍՉ. ՄԽԻԹ. ՏՊԱՐԱՆԻՆ

© National Library of Armenia